ԱՐԵՐԱՏ ԴԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

491.99-5
2-47

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

1683
40

491.99-5
N-51

N.2 4/multo
15/2/71

04 MAY 2010

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ

431.99-5
Ղ - 47

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ
ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

19 JUN 2013

6849

Դասագիրքը կազմելուն ուժանդակել է Ն. ՄԱԶՄԱՆՅԱՆԸ

1683
40

А. Гарибян
АРМЯНСКИЙ ЯЗЫК
Грамматика и правописание.
Учебник для 2-го класса.
Гиз. Арм. ССР, Ереван, 1940

Պատմեցեք.



1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ով ինչ է անում.



Ուսուցիչը բացատրում է։
Աշակերտները լսում են։

Այստեղ կա յերկու նախադասություն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1։ Կազմեցեք յերեք նախադասություն.

Արան . . . . (ինչ է անում)
Սեդան . . . . (ինչ է անում)
Բանվորը . . . (ինչ է անում)
(Կարդում է, գրում է, աշխատում է)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2։ Կազմեցեք յերեք նախադասություն.

(ո՞վ) . . . . . գրում է։
(ո՞վ) . . . . . խաղում է։
(ո՞վ) . . . . . վազում է։
(Արփիկը, Շուշիկը, Շողիկը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3։ Լրացրեք նախադասությունները.

Ձին արածում է . . . (վորտեղ)։
Կատուն բռնում է. . . (ինչ)։
Մեղուն շինում է . . . (ինչ)։
(դաշտում, մուկ, մեղր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Լրացրեք նախադասությունները.

Աշակերտները խմբերով գնում են . . . . (ո՞ւր)։
Ուսուցիչը դասարանում բացատրում է . . . . (ինչը)։
Հասմիկն ու Սեդան դաշտում. . . . (ինչ) են քաղում։
(դպրոց, դաս, ծաղիկ)

Կարդալիս նախադասության վերջում դադար ենք տալիս։ Գրելիս նախադասության վերջում դնում ենք վերջակետ։ Վերջակետից հետո սկսում ենք մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5։ Արտագրեցեք և գրեք վերջակետը։

Աշխատանքի յուրաքանչիւր հասարակ Աշխատանքները գեղեցիկ նշագրութիւնը համախում և բերիր թռչունները կմրամ են դեպի գարշ յերկիրներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6։ Կարդացեք և ասացեք՝ Պետիկը ճիշտ է բացատրում վերջակետը։



ՊԵՏԻԿԻ ՎԵՐՋԱԿԵՏԸ

Պետիկը նստեց դասը սովորելու։ Մեկ էլ մայրը նըկատեց, որ Պետիկը գլուխը դրել է սեղանին ու ննջում է։

— Պետիկ ջան, ինչու դասդ չես սովորում,— ասաց մայրիկը։

— Վերջակետի յեմ հասել, մայրիկ,— պատասխանեց Պետիկը,— ուսուցիչն ասաց՝ յերբ վերջակետի հասնես, հանգստացիր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7։ Արտագրեցեք։ Վերջակետից հետո չմոռանաք սկսել մեծատառով։

Մենք բոլորս սիրում ենք մեր Խորհրդային հայրենիքը։

Կարմիր սահմանապահները պաշտպանում են մեր սահմանները։

Բոլորս ցանկանում ենք պիոներ դառնալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8։ Ուշադիր կարդացեք։ Յուրաքանչյուր նկարի համապատասխան գտեք մի նախադասություն։



ՀԵՐՈՍ ՏՂԱՆ

Սլաքավարի վորդի Սաքոն ատուգում եր յերկաթուղու գիծը։ Հեղեղը մի տեղում փչացրել եր գիծը։ Սաքոն լսեց հեռվից մոտեցող գնացքի ձայնը։ Սաքոն անմիջապես իր կարմիր վզկապով մի դրոշակ պատրաստեց։ Կարմիր դրոշակը ձեռքին Սաքոն կանգնեց գծի վրա։ Մեքենավարը նկատեց։ Նա կանգնեցրեց գնացքը Սաքոյից մի քանի քայլ հեռու։ Հերոս տղան գնացքը փրկեց խորտակումից։

2. ԲԱՌ ՅԵՎ ՎԱՆԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9։ Գտեք՝ քանի՞ բառ կա այս նախադասության մեջ.

Մեծ սավանն սպիտակ
Դաշտերն առավ ձյունի տակ։

Բառերը լինում են միավանկ և բազմավանկ։ Միավանկ բառեր՝ պատ, քար, տուն։ Բազմավանկ բառեր՝ կատու, ծաղիկ, դասարան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10։ Անգիր սովորեցեք։ Արտագրեցեք և հաշվեցեք միավանկ բառերը.

Այնպես հուզվեց այն մանկիկը՝
Ուզբեկուհին ժպտերես,
Յերը իր ձեռքի փունջ ծաղիկը
Առաջնորդին նվիրեց։

— Ընդունեք սերը մեր յերկրի,
Դու մեր արև, դու մեր հայր,
Այս անթառամ ծաղիկների
Անուշ բույրը կենսարար։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11։ Արտագրեցեք և հաշվեցեք բազմավանկ բառերը։



Կլիմ Վորոշիլովին
Նամակ գրեցի.
— Ընկեր Վորոշիլով,—
Այսպես սկսեցի։

— Յեղբայրս այս տարի
Բանակ է գնում,
Գիտեմ, վաղուց է նա
Դրան յերազում։

Ընկեր Վորոշիլով,
Վատահեր նրան.
Կմեռնի՝ չի թողնի,
Վոր մեզ վրա գան։

Վանկը կազմված է մեկ կամ մի քանի հնչյուններից։

Օրինակ՝ ա-սաց։

Առաջին վանկը կազմված է մեկ հնչյունից՝ ա։

Յերկրորդ վանկը կազմված է յերեք հնչյունից՝ սաց։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12։ Արտադրեցեք։ Հաշվեցեք ամեն մի վանկի հնչյունները։



Հանդ ու այ-գի կապ-դա-ռան,
Դամ և խաս-դում դաղ-դե-ռամ,
Թռչ-չան-ներն են թեր գո-վում.
Յինչ դեղ-դան ես, դամ մա-յիս։

Ղոռ կայ-դատ ես ման-կան պես,
Թռչ-վր-ռան ու խրն-դե-ռես,
Ջռռ-ռում, դռ-ռում կր-ռե-ռես
Դողդ ապ-խապ-հին ալ մա-յիս։

3. ՀՆՉՅՈՒՆ ՅԵՎ ՏԱՌ

Հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն։

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, ի, ո, ու, ը, ընդամենը 6 հատ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13։ Հաշվեցեք, թե ամեն մի բառ քանի՞ ձայնավոր ունի։

Անգիր սովորեցեք ձայնավորները։

Գարունը յեկավ։ Որը տաք եր, արևը վառ։
Մեղուները փեթակից դուրս յեկան։

Մեղուները դաշտում ու այգում բացված ծաղիկների բաժակներից կուշտ կերան, ապա ուրախ-ուրախ վերադարձան փեթակը։

Ձայնավորներից բացի մյուս բոլոր հնչյունները բաղաձայն են։

Բաղաձայն հնչյուններ՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ, ընդամենը 30 հատ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14։ Արտագրեցեք։ Հաշվեցեք, թե ամեն մի բառ քանի բաղաձայն ունի։



Իսանարի ու հեզ
Մի հոգնաձի յեզ,
Արորն ուսին,
Եաշեր ոգսին
Մի խրիվան
Գայիս ետ գոռն։

Հնչյունի նշանը կոչվում է գիր կամ տառ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15։ Կարդացեք։ Գտեք հանելուկը։ Վորոշեցեք, քանի՞ տառ ունի ամեն մի բառ։

Զորս յեղբայր են,
Ամեն տարի
Յերկրի վրա
Ման են գալիս։

Տառերը լինում են մեծատառ և փոքրատառ։ Մեծատառը լինում է միայն բառասկզբին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16։ Արտագրեցեք և ընդգծեցեք մեծատառերը։



ՎՈՉՆԻՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ

— Ի՞նչ տգեղ ու ծակծկոտ՝ շորեր ունես, բարեկամ,— ասաց նապաստակը վոզնուն։

— Ճիշտ է,— պատասխանեց վոզնին,— բայց իմ փշերն լինձ աղատում են շների ու գայլերի ատամներից։ Քո մորթին էլ քեզ աղատում է։

— Վա՛յ։ Ինձ ապատում են իմ արագավազ վոտները,— պատասխանեց նապաստակը։

Տառերի ընդունված շարքը կոչվում է այբուբեն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17։ Արտագրեցեք մեծատառերը։

Այբուբեն

Ա.ա, Բ.բ, Գ.գ, Դ.դ, Ե.ե, Զ.զ, Ը.ը, Թ.թ, Ժ.ժ, Ի.ի, Լ.լ, Խ.խ, Ծ.ծ, Կ.կ, Հ.հ, Ձ.ձ, Ղ.ղ, Ճ.ճ, Մ.մ, Յ.յ, Ն.ն, Շ.շ, Ո.ո, Չ.չ, Պ.պ, Ջ.ջ, Ռ.ռ, Ս.ս, Վ.վ, Տ.տ, Ր.ր, Ց.ց, Ու.ու, Փ.փ, Ք.ք, Ֆ.ֆ։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18։ Արտագրեցեք փոքրատառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19։ Անգիր սովորեցեք այբուբենը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20։ Արտագրեցեք այբբենական կարգով.

դ, թ, ի, ժ, ղ, գ, ե, բ, ը, ա, խ, լ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21։ Արտագրեցեք բառերը իրենց առաջին տառերի այբբենական կարգով.

Արտ, ծաղիկ, թռչուն, բզեզ, գարուն, դանակ, ընկեր, զանգ, ինչ, եմին, լոր, խաղող։

Առանձին գործածելիս 3 հնչյուն ունեցող յեվ բառը կարճ գրվում է և։

Այս և գիրը մեծատառ չունի, դրա փոխարեն գրվում է Ցեվ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22։ Արտագրեցեք։ ընդգծեցեք և գիրը։

Մ Ե Ղ Ո Ւ

Առավոտից յես շրջում եմ
Ցեվ դաշտ, և՛ սար, և՛ այգի,
Ցես մի փոքրիկ ժիր անդամն եմ
Մեր համերաշխ համայնքի։

Բառի մեջ եվ կամ յեվ հնչյունների փոխարեն գրվում է և։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23։ Արտագրեցեք և ընդգծեցեք և գիրը։ Քանի՞ հնչյունի նշան է։

Արև, արև, յեկ, յեկ,
Ձիգի քարին վեր յեկ,
Սև-սև ամպեր, հեռացեք,
Արևին ճամփա տվեք։

Ցերկու բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը սովորաբար չի գրվում։ Որինակ՝ լսվում է գլուխ, բայց գրվում է գլուխ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24։ Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, որտեղ լսվում է ը, բայց չի գրված։

Մանուշակը կապույտ գլխով,
Թաք է կացել թփերի տակ,
Զանգակիկը մեղմ ճոճելով
Թերն է ներկել կապույտ-ապխտակ։
Ճերմակ հագած հեզ Շուշանը
Փսփսում է զեփյուռի հետ,
Թերը փռած Մարգարիտը
Որորվում է առաջ ու յետ։

4. ՏՈՂԱԴԱՐՁ

Բազմավանկ բառերը կարելի յե բաժանել վանկերի։
Որինակ՝ ա-շա-կերտ, Սա-նա-սար։
Վանկերի բաժանելիս բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը գրվում է։
Որինակ՝ գը-լուխ, փը-սա-սալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25։ Արտագրեցեք՝ վանկերի բաժանելով.



1683
40

ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԵՐԸ

Յերկու կամակոր այծ իրար հանդիպեցին մի նեղ կամրջի վրա։ Այծերից վոչ մեկը չուզեց մյուսին ճանապարհ տալ։ Նրանք ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին և վերջը յերկսով ել թրմփացին ջուրը։

Յերբ ամբողջ բառը տողում չի տեղավորվում, մեկ կամ մի քանի վանկ տանում ենք հաջորդ տողը։ Դա կոչվում է տողադարձ։
Որինակ՝ Ար-շանուշ կամ Արշա-նուշ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26։ Ցույց տվեք, թե քանի տեսակ կարելի յե տողադարձ անել հետևյալ բառերը.
Ցերեխաներ, ճանապարհ, անտառներ, արթնանալ, ամենամոտ, արձակեցեք, դեղատուն, կարկաչահոս։

ՀԱՅԿ-ՍՈՎԽՈՍ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27։ Արտագրեցեք վանկերի բաժանելով։

ՆԱՄԱԿ ՎՈՐՈՇԻԼՈՎԻՆ

(Շարունակություն)

Նա դիպուկ խփող է,
Ինքդ կտեսնես,
Ցերը թշնամու դեմ
Գնալ հրամայես։

Իսկ յեթե մեռնի
Իմ յեղբայրը մեծ,
Այդ մասին իսկույն
Նամակ կգրես։

Ընկեր Վորոշիլով,
Շուտով բոյ կառնեմ,
Ցեղբորս փոխարեն
Դիրքում կկանգնեմ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28։ Արտագրեցեք և յուրաքանչյուր բառ բաժանեցեք առոգադարձի նման՝ ձեր ցանկացածի պես։

ՑԵՐԿՈՒ ԽՈՓ

Մի անգամ յերեքի կողմից դարբնոցում դանվում եյին յերկու խոփ։ Դրանցից մեկն իսկույն գնաց աշխատանքի, իսկ մեկը յերկար ժամանակ ընկած եր դարբնոցում։

Մի անգամ այդ յերկու խոփերը կրկին պատահեցին իրար։ Աշխատող խոփը ապշած պես փայլում եր, իսկ պատահ մի-հնացածը սեվացած եր ու ժանգով պատած։

5. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ը ձայնավորը

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29։ Վորոշեցեք՝ վոր հնչյուններից առաջ լսվող ը-ն չի գրվում։

Ընկեր Ստեփանը վերադարձավ Ստեփանավանից։ Ժամը իններին սկսվում է մեր դասը։ Մի շտապիր, սպասիր մի քիչ՝ զբոսանքի գնանք։ Զգուշը յեղիր արտագրելիս սխալներ բաց չթողնես։ Ստուգման ժամանակ գերազանց դնահատական ստացա։

Բառասկզբին ը չի գրվում ստ, սպ, սփ, սթ, սկ, զգ, զբ, շտ, սք, բաղաձայններից առաջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30։ ՎՀը բաղաձայններից առաջ լսվում է ը բայց չի գրվում։

Ընդգծեցեք։

Սկիզբ, սկյուռ, սավեր, ստանալ, ստացական, ստորագրություն, ստուգել, սթափվել, սպասել, սպառել, սպիտակ, սքանչելի, սփոփել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31։ ՎՀը բաղաձայններից առաջ է լսվում ը բայց չի գրվում։

Ընդգծեցեք։

Զբաղվել, զբոսնել, զգալ, զգաստ, զգոն, զգեստ, զգուշ, շտապ, շտեմարան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32։ Արտագրեցեք և ավելացրեք բաց թողած տառը։

Վորսորդը մի գայլ — պանեց։ — պիտակ սավանը ծածկել է դաշտ ու ձոր։— տեփանն ու — պանդարը — բոսանքի յեն —տապում։—գույշ,—գեստդ չպատառոտես։—կսվել են մեր — տուգումները։

(սպանեց, սպիտակ, Ստեփան, Սպանդար, զբոսանք, շտապել, զգույշ, զգեստ, սկսել, ստուգում)։

Տողադարձի ժամանակ բառասկզբին լսվող ը-ն գրվում է։ Որինակ՝ ըս—պասել, ըզ—բոսնել

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33։ Գտեք սպ, ստ, սկ, սթ, զբ, զգ, շտ, բաղաձայններով սկսվող բառեր և տողադարձ արեք։

Որինակ՝ ըշ-տեմարան, ըս-պիտակ։

ՑԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ

այ, ոյ, ույ, եյ,
յա, յու, յե։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34։ Արտագրեցեք այն բառերը, որոնք ունեն այ, ոյ, ույ, եյ, յա, յու, յե, յերկհնչյունները։

ԽԱՂՈՂԻ ՍՅՈՒՄ

Մի ամառ, յերբ դեռ փոքր եյի, յես ու քույրս հյուր եյինք գնացել քեռուս այգին։ Սմեն ինչ այդտեղ նոր ու մեզ համար։ Ամբողջ որը թափառում եյինք այգում, իսկ յերեկոյան հոգնած ու անուշ քնում եյինք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35։ Գտեք և ավելացրեք այ, ույ, յա, յու, յե, յերկհնչյուններ ունեցող բառերը։

Մայր — — — — — — — — — — — —

բույլ — — — — — — — — — — — —

վոսկյա — — — — — — — — — — — —

այուծ — — — — — — — — — — — —

յեզ — — — — — — — — — — — —

Ց ՁԱՅՆԱԿԱՊԸ

Ա, Է, ո, և հաջորդ ձայնավորների միջև գրվում է յ, յեթե լսվում է։
Այդ յ-ն կոչվում է ձայնակապ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36։ Ստուգեցեք՝ վո՞ր ձայնավորներն է կապում յ-ն։

Նայիր, Կարոյի պայուսակը Միքայելի նստարանի վրա յե։

Հայելին թեյի սեղանին է։ Նոյեմբերն աշնանային ամիս է։

յ ձայնակապը հաջորդ ձայնավորին միանալով վանկ է կազմում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37։ Վանկերի բաժանեցեք հետևյալ բառերը։

Ծնունդ, Պրոմնյակ, կայարան, մարդի հայելին։
Թեյի պայուսակը, Նոյեմբեր ամիսը։

Իա, իե, իո, իու, իի, յերկձայնավորների միջև յ չի գրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38։ Արտագրեցեք և ընդգծեցեք իա, իե, իո, իու, իի, յերկձայնավորները։

Կաբրիելը և Դանիելը միասին են պարապում։ Աբամը և Վիկտորիան եքսկուրսիա գնացին։ Ընկ. Ոֆելիան մեր դասախարակն է։ Մոսկվան Խորհրդային Միության մայրաքաղաքն է։ Պիոներ Վաչիկը գերազանցիկ է։

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

դ—թ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39։ Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, որոնց մեջ արտասանվում է թ, բայց գրվում է դ։

Վարդ	Խորհուրդ
Կարդալ	Խնդրել
Մարդ	Թաղեվոս
Վարդան	Ցերկրորդ
Զարդ	Ցերրորդ
Ժողովուրդ	Զորրորդ
Ոդ	Վորդ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40։ Արտագրեցեք։ Լրացրեք բաց թողնված տառերը.

Վար — անը, յերկրոր — դասարանում և։
Թա — եվոսը կար — ում ե մի նոր գիրք։
Մայիսին բացվում ե վար — ը։
Խորհր — ալին ժողովուր — ը յերջանիկ ե։

ձ — ց

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41։ Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում ե ց բաց գրվում ե ձ։

խուրձ



արձան



դերձակ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42։ Արտագրեցեք վերևի ցուցակը այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43։ Արտագրեցեք և բառացուցակի-ոգնությամբ լրացրեք բաց թողնված տառը։

Բար — ը պահիր պիոներական պատիվդ։
Վերադար — ին տեսա մի գեղեցիկ ար — ան։
Ար — ակուրդը վերջացավ։ Դեր — ակը կարում ե։
Բար — ը փափուկ ե։ Դեղ — ը համեղ միրգ ե։

Ղ — Հ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44։ Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում և ղ գրվում ե ղ։

արջ

վերջ	թրջել
առաջին	մրջյուն
աղջիկ	աջ
առողջ	մեջ
վողջույն	իջնել
ղղջալ	—

մրջյուն

աղջիկ

չղջիկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45։ Արտագրեցեք այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46։ Արտագրեցեք և վերևի բառացուցակի ոգնությամբ լրացրեք բաց թողնված տառը։

Առա=ջին գասարանում աղ=ջիկներ դասը կան։ Աղջամուրդի վեր=ին ոդը կրկնեցի դասերս։ Ար=ի խոտոր թր=ից իր վոգը։ Դաշտում մր=յուռնի բույն գտա։

Բ—Փ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47։ Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է Փ, բայց գրվում է՝ Բ։

յերբ	հարբուխ
նուրբ	խաբել
յերեսբբիչ	համբույր
վորբ	սրբել
հարբել	Հակոբ

դարբին

Գ—Ք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48։ Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է Ք, բայց գրվում է Գ։

յերգ	ոգնել
կարգ	հոգնել
կարագ	հոգնակի
մարագ	պարգև
շոգ	Սարգիս
անգամ	Գրիգոր
ուրագ	Մարգարիտ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49։ Արտագրեցեք վերևի ցուցակը այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50։ Արտագրեցեք և բառացուցակի ոգնությամբ լրացրեք բաց թողնված տառը։

Մի յեր — գիտեմ լես անման
Հզոր մուրճի թափի նման։
Պար — եվուհին ո — նում է Մար — արիտին։
Ամառը շո — ե լինում։ Սար — խը հո — նել է։
Հյուսնը ուրա — ով տաշում է։

6. ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51։ Ավելացրեք ուրիշ առարկաների անունները։

Ի՞նչ։— մատիտ, տուն, ծառ, խոտ...
Ի՞նչ։— ձի, բադ, հավ, արջ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52։ Ավելացրեք ուրիշ առարկաների անունները.

Ո՞վ.— աշակերտ, բանվոր, ուսուցիչ...
Ո՞վ.— հայր, տատ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53։ Գտեք և գրեցեք այս բոլոր առարկաների անունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54։ Կարդացեք և գտեք առարկաների անունները։

ԳԻՐՔ

Ասա տեսնեմ,
Իմ սիրուն գիրք,
Քեզ կսիրեմ,
Քան խաղ ու միրգ։
Ես ինչեր կան
Ծոցիդ մեջը.
Ճատան մկնիկ,
Վոսկի ձկնիկ,
Թիթեռ, բզեզ,
Իսկ ծաղկի պես,
Բադ ու պուլիկ,
Գառն ու ուլիկ,
Կաքավ ու լոր,
Շլոր, սալոր...
Ասա, պատմիր
Իմ ականջին,

Դու ծանոթ ես
Ամեն ինչին։
Դե, շուտ պատմիր,
Իմ խելոք գիրք,
Քեզ կսիրեմ,
Քան խաղ ու միրգ։

ԱՌԱՐԿԱՆԵՐ







ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55։ Գրեցեք հետևյալ տեսակի առարկաների անուններ.

Մարդիկ.— ուսուցիչ, տղա...
Բույսեր.— սինձ, մանուշակ...
Թռչուններ.— բադ, ծիծեռնակ...
Մրգեր.— տանձ, խաղող...

Մարդը, կենդանին, բույսը, միրգը,— բոլոր իրերը կոչվում են առարկա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56։ Հարցերի փոխարեն գրեք առարկաների անուններ։

Աշակերտը գրում է (ինչով)... (ինչ)...
Հյուսանը սղոցում է (ինչով)... (ինչ)...
Տատը կանչում է (ում)...
Շուշիկը հանդիպում է (ում)...
Պապը նամակ ստացավ (ումից)...

Առարկաների անունները պատասխանում են հետևյալ հարցերին.
ով, ինչ, ում, ինչի, ինչին, ումից, ինչից, ումով, ինչով, ինչում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57։ Կարդացեք և ասացեք, թե ինչ հարցերի յեն պատասխանում առարկաների անունները։



ԻՆՉ ՑԵՂԱՆԱԿ Ե

Ցեռ վոսկեզոծում եմ աբտերը և կոացնում հասկերի գլուխները։

Ցեռ կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, դեղձ ու խաղող։

Ցեռ ճուտիկներին թոցնում եմ բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազատ սարերը։

Մի թե լինձ չեք սիրում։

7. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԹԻՎԸ

Առարկաները լինում են յեզակի և հոգնակի։

Ցեղակի (մեկ առարկա)

տանձ

Հոգնակի (մեկից ավելի առարկաներ)

տանձեր

թիթեռ

թիթեռներ

Ցեղակին ցույց է տալիս մեկ առարկա։
Հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի նույն տեսակի առարկաներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58։ Լրացրեք, կետերի տեղը գրելով հոգնակիները։

Սար	Սարեր
Քար	. . . .
Գառ	. . . .
Ճուտիկ	. . . .
Մանուկ	. . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59։ Վորոշեցեք՝ առարկա ցույց տվող բառը յեղակի՞ յե, թե՞ հոգնակի։



ՎՈՐ ՅԵՂԱՆԱԿՆ Ե

Ցես գույն-գույն ներկում եմ ծառերը և ճամփա դնում թռչուններին դեպի տաք լերկիրները։ Ցես լցնում եմ մառանները մրգերի կախաններով, չիր ու չամչով։ Ցես բաց եմ անում ձեզ համար գպրոցի դռները։

Մբթե ինձ չեք սիրում։

Հոգնակին կազմելիս միավանկ բառերին ավելացնում ենք եր, իսկ բազմավանկ բառերին՝ ներ վերջավորություն։

վարդ



վարդեր



բանվոր



բանվորներ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60։ Կազմեցեք հետևյալ միավանկ բառերի հոգնակին։

Ցեզակի	հոգնակի
Որ	----------
գետ	----------
դար	----------
հատ	----------
այծ	----------

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61։ Կազմեցեք հետևյալ բազմավանկ բառերի հոգնակին։

պիոներ	----------
աշակերտ	----------
աղջիկ	----------
դրդա	----------
մատռակ	----------
յերեխա	----------

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62։ Վորոշեցեք՝ առարկա յուլյ տվող բառի հոգնակին ինչ վերջավորություն ունի։

ՎՈՐ ՑԵՂԱՆԱԿՆ Է

Ցես բերում եմ պայծառ արև ու տաք որեր։

Ցերը գալիս եմ, դաշտերն ունենում են դալար խոտեր, իսկ անտառները կանաչ տերևներ։ Ցես բերում եմ ծաղիկներ ու թիթեռներ, բերում եմ սիրուն թռչուններ, վորոնք գալիս են հեռու յերկիրներից։

Մի թե ինձ չեք սիրում։

8. ԱՌԱՐԿԱՅԻ ՎՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63։ Գրեցեք հարցերի պատասխաններն ըստ նկարների։

Ինչպիսի սեղան Ինչպիսի մատիտ



(փոքր . . . . . մեծ . . . . կարճ . . . . յերկար . . . .

> Փոքր, մեծ, կարճ, յերկար, ջանասեր, ծույլ և նման բառերը ցույց են տալիս առարկայի վորպիսությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64։ Կետերի տեղը դրեք վորպիսություն ցույց տվող բառեր

. . . . . դաշտ . . . . . արտ . . . . . ,
. . . . կով . . . դառնուկ . . . . . պիոներ . . . .
տղա . . . . . ուլիկ . . . . . աղջիկ . . . . . ։

> Վորպիսություն ցույց տվող բառերը պատասխանում են ինչպիսի հարցին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65։ Արտագրեցեք և ընդգծեցեք վորպիսություն ցույց տվող բառերը։

ՄԱՅԻՍ

Ալ ու ալվան վառ մայիս,
Դու ամենից լավ ամիս,
Կյանք ու արև ես տալիս։
Ի՞նչ սիրուն ես, ջան մայիս։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66։ Ինչպիսի հարցի միջոցով գտեք առարկայի վորպիսությունը ցույց տվող բառերը և արտագրեցեք։

Ե՞յ, կանաչ ախպեր,
Ե՞յ, ճանաչ ախպեր,
Արի, քեզ հետ բերը,
Արևի շողերը։
Բերը անուշահոտ

Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ,
Ցերկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զրնգան յերգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն...
Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր։

9. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67։ Կետերի տեղը գրեցեք, թե ի՞նչ է անում աշակերտը։



Գուրգենը... Գուրգենը.... Գուրգենը.... Գուրգենը.....

Խաղում է, սովորում է, ուտում է, քնում է բառերը ցույց են տալիս առարկայի գործողությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68։ Գրեցեք, թե ի՞նչ է անում ամեն մեկը։



Գործողություն ցույց տվող բառերը պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ անել հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69։ Շարունակեցեք բառացանկը, ավելացնելով առարկայի գործողություն ցույց տվող բառեր։

Ի՞նչ է անում։ Գրում է, լսում է...
Ի՞նչ արեց։ Գրեց, լսեց...
Ի՞նչ անել։ Գրել, լսել...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70։ Արտագրեցեք և առարկայի գործողություն ցույց տվող բառերի տակ գիծ քաշեցեք։

ԾԻՏԻԿԸ

Ցերգում եմ, յերգում
Ցեվ ուրախանում,
Վոր իմ յերգերով
Աշխարհն է հրճվում։

Իմ գործն է՝ անվերջ
Ցերգել ու յերգել,
Ագատ ու անհոգ
Վեր ու վար ճախրել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71։ Ի՞նչ հարցի յեն պատասխանում գործողություն ցույց տվող բառերը.



ՁՄԵՌ

Ձյուն ու ցուրտ յեկավ,
Առու, գետ լռեց։
Իր սպիտակ գորգը
Ձմեռը փռեց։

Ձյունը ծնկահար
Նստեց մեծ ճամփին,
Սպիտակ հյուռերը
Կիտեց գետափին։
Ծառեր ու թփեր
Ձմեռն արծաթեց,
Սար ու ձոր ընկավ,
Կալեց ու կապեց։

10. ՄԵԾԱՏԱՌ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72։ Արտագրեցեք։

Դպրիկ. Անուշ. Ակրիկ. Խորենն.
Արամին. Արտակն. Անուշն ուր են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73։ Քանի՞ անուն կասես՝

գետի։ Վոլգա...
սարի։ Արագած...
գյուղի։ Քանաքեռ...
քաղաքի։ Յերևան...
տղայի։ Արամ...
աղջկա։ Հասմիկ...

Գրելիս մարդկանց, գետերի, լճերի, գյուղերի, քաղաքների, փողոցների, յերկիրների անունները սկսում ենք մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74։ Գրեցեք յերեք տղայի անուն, չորս աղջկա անուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75։ Կազմեցեք հինգ անուն և ազգանունների ցուցակ։

1. Հրաչյա Հովսեփյան
2. . . . . .
3. . . . . .
4. . . . . .
5. . . . . .

Գրելը սկսում ենք մեծատառով։ Վերջակետից հետո էլ սկսում ենք մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76։ Գրեցեք ձեր հասցեն հետևյալ օրինակով։

Ղամարլվի շրջան
Դարղալու գյուղ
Հեռիկ Ղարիբյանին

կամ

Յերևան
Նալբանդյան փողոց №45
Զուբերա Ղարիբյանին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77։ Լրացրեք այս անկետան։

1. Անուն . . . . . .
2. Հայրանուն . . . . . .
3. Ազգանուն . . . . . .
4. Բնակության տեղը (գյուղ կամ քաղաք). . .
5. Փողոց և № . . . . . .

11. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78։ Վոր բառն է հարց արտահայտում։

Ծիտը ծալն հարցրեց.
— Ո՞ւր է ճուտդ, ծիտ։
Ճուտը գլուխը բնից հանեց և պատասխանեց.
— Ճիտ։

Հարց արտահայտող բառի վերջին ձայնավորի վրա դրվում է հարցական նշան (՞)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79։ Կարդացեք, գտեք, թե վերևում հարցնող բառերը, ինչ նշան ունեն իրենց վրա։

Յերգում եր մարիկ կկու։
Մին էլ ընդ՝ աղվեսն եկավ։
— Ես սարը իմն է,
Ես ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում մի բուն,
Ես ով է յեկել
Տիրացել թաքուն։
Ախ դու կկու, հիմար կկու,

Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Յերեք հատ ձագ, աղա՛ Աղվես։
— Յերեք հատ ձագ ցույց կտամ քեզ։
Ու չես ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղրկես ինձ մոտ։
Զգի՛ շուտով մի հատը ցած,
Թե չե՝ կացինս հրեն սրած,
Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80։ Հետևյալ հարցերին պատասխանեցեք լրիվ նախադասություններով.

Ի՞նչ է անունդ։ . . . . . .
Ի՞նչ է ազգանունդ։ . . . . . .
Վո՞ր գյուղից կամ քաղաքից ես։ . . .
Քանի՞ տարեկան ես։ . . . . . .
Վո՞ր առարկայից գերազանց կամ լավ գնահատական ունես։ . . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81։ Տրված պատասխանների համար գրեցեք լրիվ հարցեր։

. . . . . .

Կարմիր բանակն է պաշտպանում մեր յերկիրը։

. . . . . .

Ուզում եմ լինել ոդաչու։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82։ Գտեք, վո՞ր բառերն են շեշտված արտասանվում. ինչ նշան կա նրանց վրա։



Կարդա՛ այ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրքի տարին բոլոր
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր։

Հրաման, դիմում, խնդիր կամ պահանջ արտահայտող բառերի վերջին ձայնավորի վրա դրվում է շեշտ (՛)։
Շեշտ ունեցող բառն ուժեղ է արտասանվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83։ Արտագրեցեք և ընդգծեցեք շեշտ ունեցող բառերը։

Արևը.—Սիրո՛ւն աղջիկ, ինչ դրկեմ քեզ։
Աղջիկը.—Ցես ծաղիկներ կուզեմ պես-պես։
Արևը.—Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ
Սառցի տակին քնած եք դեռ։
Դուրս լեկեք, դո՛ւրս,
Շուտ դեպի լույս,

Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քնած սիրուններին,
Ծաղիկներին ու ծիլերին.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84։ Գտեք այն բառերը, որոնք լերկար են արտասանվում. ինչ նշան կա նրանց վրա։

Ծաղիկները.— Բարև՛, բարև՛, կարմիր արև,
Ա՜խ, ինչ լավ է դեպի վերև —
Ազատ, լուսա, տաք,
Կապույտ, հստակ...
Արևը.— Սիրո՞ւմ եք ինձ...
Ծաղիկներ.— Ա՜խ, ենպես եմ սիրում, ենպես,
Ել առանց քեզ չեմ ապրի յես...

Բառի յերկար արտասանվող վանկի վրա դրվում է բացականչական նշան (՞)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85։ Արտագրեցեք և ընդգծեցեք բացականչական նշան ունեցող բառերը։



ԱՌԱՎՈՏ

Պայծառ արևը բարձրացավ յերկինք և վոսկեփայլ ճառագայթները տարածեց յերկրի վրա։

Առաջին ճառագայթն ընկավ արտուտի վրա։

Արտուտը թափրտաց, թափ տվեց թևերը, դուրս թռավ բնից, բարձրացավ վեր ու վեր և սկսեց յերգել բարձրաձայն.—

Ճիվ, ճիվ, ճիվ, ճիլի-վիլի,
Ճիլի-վիլի, վռւտ, վռւտ, վռւտ, ճը՞ռռ...

Հարցական նշանը, շեշտը և բացականչական նշանը կոչվում են առոգանության նշաններ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86։ Կարդացեք և ցույց տվեք, թե վոր բառն ինչ նշան ունի, ինչպես պետք է կարդալ։



ՅԵՍ

Ագռավը բռնեց մի խեցգետին և նստեց ծառին։

Խեցգետինն ուզեց ազատվել նրա կտցից ու ասաց նրան.

— Վոսկեհատիկ, ազռավ քույրիկ, ով է մեզնից կեղտոտը։

Ագռավը սեղմեց կտուցը և կռռաց.

— Դռռ...

— Վոսկեհատիկ ազռավ քույրիկ, ով է մեզնից նախշունը։

Ագռավը բացեց կտուցն ու կռռաց.

— Յես...

Կտուցը բաց անելուն պես խեցգետինը կտցից ընկավ ջուրը և ազատվեց։

ՑԱՆԿ

1. Նախադասություն 4
2. Բառ և վանկ 8
3. Հնչյուն և տառ 11
4. Տողադարձ 16
5. Ուղղագրություն 19
6. Առարկայի անուն 27
7. Առարկաների թիվը 31
8. Առարկայի վորպիսություն 36
9. Առարկայի գործողություն 38
10. Մեծատառ 41
11. Առոգանության նշանները 43

Պատ. խմբագիր՝ Գ. Սեվակ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ս. Փաքսադանյան

Գրավոր լիազոր՝ Ջ—1045. Հրատ. 5097.
Պատվեր 886. Տիրաժ 55 000.
Թուղթ 62×94. Տպագրակ. 3 մամ.
Մեկ մամուլում 24480.
Հանձնված է արտադրության 11 դեկտեմբերի 1939 թ.
Ստորագրված է տպագրության 5 հունվարի 1940 թ.

Գետերատի I տպարան, Երևան, Լենինի, 65.

Գին 70 կ.
Կազմը 50 կ.

6849

6760

А. ГАРИБЯН

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Грамматика и правописание

Учебник для 2-го класса.

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.